

տնօրեն Յարութ Երեցեանն ու գրաշարուհի Սեդա Երեցեանը:

Փրոֆ. Սանճեան հաւաստած է նաեւ՝ թէ Հանդէսը չէր կրնար հրատարակուիլ առանց ՀՐԸՄ-Ալեք Մանուկեան Մշակութային Հիմնադրամի մեկենասութեան, որ հոգացած է հանդէսին հինգ հատորներու հրատարակութեան ամբողջական ծախքերը: "Խորապէս կը գնահատեմ Պարոն Ալեք Մանուկեանի եւ իր անունը կրող Հիմնադրամին ընձեռած բոլոր քարեացակամութիւնները," յարեց փրոֆ. Սանճեանը:

Հայագիտական Ուսմանց Միութեան անդամները Հանդէսը կը ստանան առանց յաւելում-ծական վճարումի: Հաստատութիւններ եւ ոչ-անդամներ կրնան բաժանորդագրուիլ՝ հատորին համար վճարելով 20 տոլար Society for Armenian Studies-ի անունով: Բաժանորդագրութիւններու համար դիմել հետեւեալ հասցէին.- Society for Armenian Studies, Armenian Research Center, University of Michigan, 4901 Evergreen Road, Dearborn, Michigan 48128-1491.

### ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՀԱՒԱՐ

#### Լեզու սորվեցնելու "Լաուպախ" մեթոտը

Լոս Անճելոսէն Տիկին Սիլվա Մանուկեանի նախաձեռնութեամբ, Երուսաղէմի գնազան դպրոցներու մէջ ծառայող երկուսասնեակ հայ ուսուցիչներ, օրական երկու ժամ տեւողութեամբ տասնըվեց ժամեր տրամադրեցին լեզու սորվեցնելու նոր մեթոտի մը ծանօթանալու համար:

Տիկին Մանուկեան, Հարվըրտէն շրջանաւարտ լեզուագիտութեան մէջ, Լոս Անճելոսի Հանրային Գրադարանի Միջազգային Լեզուներու Բաժանմունքի վարիչ է եւ գործունեայ անդամ Ամերիկեան Գրադարաններու ընկերակցութեանց:

"Լաուպախ" մեթոտը պատրաստուած է Անգլերէն լեզուն սորվեցնելու ուրիշ լեզու խօսող չափահասներու: Հայ ուսուցիչներէն ոմանք, տարիներու իրենց փորձառութեամբ, հետաքրքրութեամբ մասնակցեցան, "սորվեցնելու նոր մեթոտի մը ծանօթանալու", ուր օգտագործուեցան վիտէօի վրայ պատրաստուած պատկերներ, դասընթացքի նմոյշներ, եւ անհատական մասնակցութեամբ փորձարկումներ:

Այս յայտագիրը կարելի դարձաւ Պատրիարք Սրբազան Հօր քաջալերութեամբ, ներկայ գտնուելով դասախօսութեանց, եւ մասնաւորաբար Տիկին Մանուկեանի կարգադրութեամբ, որ ապահովեց չորս հատոր բոլոր դասագիրքերը եւ վարժութեանց տետրակները, թէ՛ ուսուցիչին եւ թէ՛ աշակերտներուն յատուկ, եւ որ Լոս Անճելոսի Գրադարանի իր պաշտօնակիցներուն օժանդակութեամբ, յայտագրի ուրիշ ծախքերուն եւս անոնց նուիրատուութիւնը ապահովեց:

Յայտագրին կազմակերպումը յանձնուած էր յանձնախումբի մը որ Տիկին Մանուկեանին հետ միասին յաջողութեամբ լրումին հասցուցին ծրագիրը, քանի մը ամիս գործակցելով: Յանձնախումբի անդամներն էին Արթըր Յակոբեան Ատենապետ, Ջեփիլո Պոյանեան քարտուղար, Նորա Նազգաշեան գանձապահ, որոնց օժանդակեցին վիտէօ նկարահանման եւ այլ կարգադրութեանց համարփ Սարօ Նազգաշեան, Վահան Մանուկեան, Սագօ Պոյանեան: Ապրիլ 27էն մինչեւ Մայիս 5 տեւող այս դասընթացքի աւարտին մասնակցողներուն տրուեցան "Լաուպախ"ի յատուկ վկայականներ եւ նուէրներ: Մասնակցողներն էին.- Եղիա Տիգրանեան, Ալիծ Քէշիշեան, Էլիզապէթ Պաղմեան, Ազնիւ Պաղտասարեան, Յարութ Պետրոսեան, Ալին Պալեան, Այրին Գալանեան, Անթառամ Գարակէօզեան, Կարինէ Մէրկէրեան, Յակոբ Մնացականեան, Սոնա Պոյանեան, Գառնիկ Պալըզեան, Արթըր Յակոբեան, Ջեփիլո Պոյանեան եւ Նորա Նազգաշեան: